Հավելված N 5
ՀՀ փոխվարչապետի
N 577-Ն որոշման

«ԱՆՎԵՀԵՐ ՓՐԿԱՐԱՐ» ՄԵԴԱԼԻ ՏԵՍԱԿԸ, ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Անվեհեր փրկարար» մեդալը (ձևը կցվում է) շնորհվում է փրկարարական ծառայողներին:

2. «Անվեհեր փրկարար» մեդալը շնորհում է պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. «Անվեհեր փրկարար» մեդալը բաղկացած է երկու մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապօղակով ամրացված 39 x 42.5 մմ չափսերով խաչից, որի կենտրոնում տեղակայված է 13մմ տրամագծով շրջանաձև սկավառակ, որի եզրագծի երկայնքով գրված է «ԱՆՎԵՀԵՐ ՓՐԿԱՐԱՐ» հայերեն գրությունը: Սկավառակի կենտրոնում պատկերված է երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը ներկված է մուգ կապույտ էմալով: Կրծքանշանի խաչը չորս անկյուններից զարդարված է դեկորատիվ ճառագայթներով: Խաչի թևերը պատված են մուգ կապույտ էմալով:

4. «Անվեհեր փրկարար» մեդալը դարձերեսի կենտրոնական մասում ունի երեք շարքով՝ «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» հայերեն գրառում:

5. Կախիչը դարձերեսի կողմից ունի հատուկ ասեղային ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24: Կախիչը պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող կապույտ մետաքսյա ժապավենով: Ժապավենը աջ կողմից եզերված է 1 մմ լայնություն ունեցող 3 մոխրագույն շերտագծերով:

6. «Անվեհեր փրկարար» մեդալի հետ տրվում է վկայական:

Ձև

«Անվեհեր փրկարար» մեդալի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ